ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

(Ալ. Թամանյանի ծննդյան ութսունամյակի առթիվ)

Մ. Վ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

Ալեքսանդր Հովհաննեսի Թամանյանը (1878—1936) սովետական ճարտարապետության խոշորագույն վարպետներից մեկն է։ Նա մտել է այն նշանավոր ճարտարապետների համաստեղության մեջ, որոնք արդեն անուն ու ստեղծագործական փորձ ունենալով, խանդավառությամբ նվիրեցին իրենց սովետական շինարարությանը։

Լինելով ստեղծագործական խոշոր կարողությունների տեր՝ Թամանյանը նախահեղափոխական տարիներին չէր կարողանում իր ուժերին լիակատար գործադրություն գտնել՝ ճարտարապետական իր լայն մտահղացումները մարմնավորելու համար։ Այդ հնարավորությունները նրա առաջ բաց արեց միայն սոցիալիզմի շինարարության դարաշրջանը։

1904 թ. Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայի ճարտարապետական դասընթացը ավարտելուց հետո Ալ. Թամանյանը աշխատում է նախ Պետերբուրգում, ապա մի քանի տարի անց՝ Մոսկվայում։

Հին Ռուսաստանի մայրաքաղաքներում և այլ քաղաքներում նա կառուցում է մի շարք շենքեր, որոնք հռչակ են բերում երիտասարդ ճարտարապետին. դրանցից են՝ Շչերբատովի տունը Մոսկվայում Ջայկովսկու անվան փողոցում, Կոչուբեյի առանձնատունը Պուշկին քաղաքի Ռագիշչևի փողոցում, Կրատովի սանատորիան, Յարոսլավլի ցուցահանդեսի հատակագծումը և կառուցումը։

Շչերբատովի տան ճարտարապետության համար Ալ. Թամանյանը 1914 թ. ընտրվում է ճարտարապետության ակադեմիկոս։

Չնայած այդ շենքերի շինարարական բարձր որակին ու հատկություններին, Ալ. Թամանյանի ստեղծագործությունը լայնորեն ծավալվեց և շատ ավելի բարձր մակարդակի հասավ Սովետական Հայաստանում կատարած աշխատանքի մեկ և կես տասնամյակի ընթացքում։ Դա ճարտարապետի ստեղծագործական կյանքի ավելի հասուն շրջանն էր, որը նա գլխավորապես նվիրեց Սովետական Հայաստանի մայրաքաղաքին՝ Երևանին։

Սոցիալիստական շինարարության առաջին օրերից, երբ Հայաստանի ազատագրված ժողովուրդը ստեղծագործական եռանդով ձեռնամուխ եղավ շինարար աշխատանքի, Ալ. Թամանյանը Սովետական Հայաստանի նոր ճարտարապետության սկզբնավորողը եղավ։ Գործնական աշխատանքին զուգընթաց նա որոնում և բացահայտում էր սովետահայ նոր ճարտարապետության ստեղծման ուղիները։

Այդ գործում բարերար ազդեցություն ունեցավ ճարտարապետության ռուսական դպրոցը, որի սկզբունքներն իրենց արտացոլումը գտան Թամանյանի բոլոր գործերի մեջ։ Նա առաջիններից մեկն էր, որ հասկացավ սովետական ճարտարապետության զարգացման ներկա իրական խնդիրները։

Թամանյանը վճռականորեն և բացեիբաց ժխտում է կապիտալիստական արևմուտքից եկող խորթ ուղղությունները, հաստատ կանգնում է սոցիալիստական ռեալիզմի ճարտարապետությունը զարգացնելու ուղու վրա։

Որպես իսկական հայ ճարտարապետ, նա իր ստեղծագործության ընթացքում անհրաժեշտ է գտնում սերտորեն կապվել Հայաստանի բնության, նրա կլիմայի առանձնահատկությունների, նրա բուսական աշխարհի և, իհարկե, հարազատ ռեսպուբլիկայի կուլտուրայի, նրա շինարար ժողովրդի դարավոր փորձի ու ավանդությունների հետ։

Թամանյանը բազմակողմանիորեն ուսումնասիրում է տեղական շինանյութերը և պայմանները. շինանյութերի, երևսապատման քարերի, կերամիկի և գիպսի հավաքածու է կազմում։ Ապրելով ռեսպուբլիկայի և ամբողջ Սովետական Միության կուլտուրական, տնտեսական, քաղաքական կյանքի իրադարձություններով, Թամանյանը, որպես պետական գործիչ, չէր կարվում երկրի իրական կարիքներից։ 1935 թ. Մոսկվայում տված իր ստեղծագործական հաշվետվության մեջ նա ասում էր. «Իմ բոլոր գործերի մեջ, սկսած 1923 թվականից, ես փորձել եմ օգտագործել անցյալ դարերի կուլտուրական ժառանգությունը։ Ես ձգտել եմ գտնել այնպիսի ձևեր, որոնք համապատասխանեին երկրի կլիմայական պայմաններին և բնության առանձնահատկություններին և արտացոլեին Հայաստանի ժողովրդական ստեղծագործությունը։ Ես ձգտել եմ գտնել այնպիսի լուծում, որը ճարտարապետության ազգային ձևը զուգորդում է սոցիալիստական բովանդակության հետ»։

Տարիներ շարունակ Թամանյանը ուշադիր կերպով ուսումնասիրում է հայկական ճարտարապետությունը, գործուն աշխատանք է կատարում պատմական հուշարձանների պահպանության իր իսկ գլխավորած կոմիտեում, հաճախակի գիտարշավներ է կազմակերպում ճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրելու և չափագրելու համար, և այս ամենը նա կատարում է հայկական ճարտարապետության պատմության խոշորագույն մասնագետի՝ Թ. Թորոսմանյանի սերտ համագործակցությամբ։ Այս ստեղծագործական համագործակցության շնորհիվ Թամանյանը խորապես ըմբռնում ու յուրացնում է ազգային ճարտարապետության լավագույն տրադիցիաները, որոնք նա հետագայում մեծ հմտությամբ օգտագործում է իր աշխատանքների մեջ։

Նրա Երևանյան վաղ շրջանի գործերում արդեն, ինչպիսին Երևանի առաջին հիդրոկայանի շենքն է, մենք տեսնում ենք ազգային ձևերի հմուտ օգտագործում։ Հրազդանի գեղանկար ձորում կառուցված հիդրոկայանի շենքն իր ճարտարապետական-տարածական լուծմամբ ներդաշնակորեն կապվում է կիրճի հոյակապ բնության հետ։ Արդյունաբերական շենքի շինարարությունը նրա գործնական խնդիրների հետ կապելու համար ստեղծագործորեն վերամշակված ազգային ձևերը շենքի ճարտարապետությունը դարձնում են ճշմարտացի, զերծ պատմական առանձին մոտիվներով և մանրամասներով կամ դրանց կրկնությամբ տարվելու որևէ հետքից։

Սոցիալիստական շինարարության ստեղծագործական խնդիրներով մեծապես ոգևորվելը ամենից ավելի վառ կերպով մենք տեսնում ենք այն մեծ աշխատանքի մեջ, որ Թամանյանը կատարեց՝ կազմելով Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը։ Ճշմարիտ հայրենասիրական զգացմունքով է տոգորված այդ նշանավոր գործը, որն անխոնջ վարպետի ամբողջ ստեղծագործության պսակն է։

Երևանի հատակագծման աշխատանքին Թամանյանը մոտեցել է որպես նոր տիպի քաղաքաշինարար, տեսնելով՝ որ սոցիալիստական ռևոլյուցիան սովետական ժողովրդի կարիքների համար վերացրել է քաղաքաշինության ամենալայն մտահղացումներին խոչընդոտող բոլոր արգելքները։

Քաղաքի հատակագծման բազմաթիվ գործնական խնդիրների համար նա գտնում էր այնպիսի լուծումներ, որտեղ նպատակահարմարությունը, ռացիոնալությունը, տնտեսական արդարացումը և այլն զուգորդվում էին գեղարվեստական կոմպոզիցիայի հետ։ Քաղաքի հատակագծի մեջ նրա նախատեսածից շատ բան այժմ իրական մարմնավորում է գտել։ Թամանյանը ճիշտ է որոշել Երևանի ներկայիս մի շարք փողոցների չափերը, ինչպես օրինակ, Ստալինի պողոտայի, Օրջոնիկիձեի պողոտայի, Աբովյան փողոցի լայնությունը և այլն. նախատեսել է Լենինի հրա-

Հայկական ՍՍՌ Կառավարական տունը

Հայկական ՍՍՌ Կառավարական տան հյուսիսային ճակատի օրդերի ֆրագմենտ

պարակի, Աբովյանի, Թատերական (Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի առջևի), Շահումյանի և այլ հրապարակների չափը, ձևը և ճարտարապետական կոմպոզիցիան։

Երևան քաղաքի հատակագծի վրա Ալ. Թամանյանի ավելի քան 12-ամյա անընդհատ աշխատանքն անհրաժեշտ էր արագորեն աճող սոցիալիստական շինարարության համար։ Բուռն թափով էր զարգանում արդյունաբերական, բնակարանային և կուլտուրական շինարարությունը։ 20-ական թվականների վերջերին և 30-ական թվականների սկզբին քաղաքի ապագան շատերի համար լիովին պարզ չէր։ Կային «մասնագետներ», որոնց Երևան քաղաքի հատակագիծը թվում էր անիրագործելի գիգանտոմանություն։ Ուշադրություն չդարձնելով թերահավատներին, Թամանյանը համառորեն աշխատում էր ստեղծագործական այդ մեծ խնդրի վրա։

Մեզ, սոցիալիստական շինարարության աճման վկաներիս, հայտնի է, որ չնայած նոր Երևանի վերաբերյալ ամենալայն մտահղացումներին, որոնց իրականացմանը Թամանյանը խորապես հավատում էր, տարեց-տարի աճող շինարարության չափերը գերազանցեցին քաղաքի վերակառուցման սկզբում եղած բոլոր ենթադրությունները։ Թամանյանը տեսնում և ստեղծագործորեն վերապրում էր Երևանի աճումը, անընդհատ վերամշակում էր նախագիծը և ձեռնամուխ էր լինում քաղաքի հատակագծի զարգացմանը, այն անվանելով «Մեծ Երևանի հատակագիծ»։

Երևանի գլխավոր հատակագծի մշակման հետագա աշխատանքը շարունակեցին նրա աշակերտները, որոնք բարձր գնահատելով իրենց մեծ ուսուցչի բեղմնավոր վաստակը, հաշվի առան նրա բոլոր նախագծումները ու ցուցումները հատակագծի հետագա կատարելագործման գործում։

Հայկական ՍՍՌ Կառավարական տան նախասրահը



Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարան. կենտրոնական մասը

Ալ. Թամանյանի հատակագծերով Երևանում կառուցվել են մի շարք շենքեր, որոնց թվում բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես օրինակ, Անասնաբուժական ինստիտուտի, Բժշկական ինստիտուտի, Անատոմիկումի, Պոլիտեխնիկ ինստիտուտի շենքերը, կլինիկական հիվանդանոցների՝ Գինեկոլոգիական կլինիկայի, Մանկական կլինիկայի (Մ. Գրիգորյանի աշխատակցությամբ), Ֆիզիո-թերապևտիկ ինստիտուտի շենքերը, ինչպես նաև բնակելի և հասարակական շենքեր։ Իրենց ճարտարապետությամբ ամենից ավելի նշանավոր են Թամանյանի հատակագծերով կառուցված Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքը և Հայկական ՍՍՌ Կառավարական տունը։

Իր ճարտարապետական լուծումների մեծ մասին Թամանյանը մոտենում էր բազմաշինական, անսամբլային մտահղացումների տեսանկյունից։ Նրա անսամբլային կոմպոզիցիաները առանձնապես արտահայտչական են Օպերայի և բալետի թատրոնի ճարտարապետության լուծման

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հարավային ճակատը



Օպերայի և բալետի թատրոն. համերգային մեծ դահլիճի ներսի ընդհանուր տեսքը
(Նախագիծը ավարտել է ճարտարապետ Գեորգ Այվազյանը)

մեջ։ Այդ շենքի չափը, բացի իր անմիջական նշանակությունից, կապված է քաղաքի կենտրոնի զգալի մասի տարածության վրա բարձրացող ճարտարապետական գերիշխող օրգանիզմի գերի հետ։ Թատրոնի հատակագծի ձևը կապված է նրա տեղադրման պայմանների հետ և հաջողությամբ նպաստում է իր հատակագծով օվալաձև շենքի հարաճուն ծավալների ներդաշնակ զուգորդմանը։ Շրջապատի հատակագծումը օրգանապես ենթարկված է թատրոնի ճարտարապետությանը։ Հատակագծման առավել ցայտուն տարրերն են թատրոնի առջևի հրապարակը և շենքի շուրջը եղած կանաչապատ օղակը։

Միևնույն մոտեցումը պարզորոշ տեսնում ենք նաև Հայկական ՍՍՌ Կառավարական տան հատակագծում։ Նրա ճարտարապետությունը գտել է Լենինի հրապարակի ամբողջ կառուցման համար անհրաժեշտ արտահայտչականության իր մասշտաբն ու աստիճանը և մատնացույց է արել անսամբլի հետագա զարգացման խնդիրները։ Քաղաքաշինական մտահղացումները պարզորոշ արտահայտվել են նաև համալսարանական թաղամասի հատակագծման ու կառուցման նախագծում, որտեղ Ղուկաս Ղուկասյանի պուրակը գրավում է կենտրոնական դիրք։ Այդ պուրակի առանցքի վրա Ալ. Թամանյանի նախագծով կառուցվել է փոքրիկ, բայց շատ արտահայտիչ մի շենք՝ համալսարանի աստղադիտարանը։ Այդ նույն առանցքի վրա պուրակի առաջ գծված է հրապարակ, որի կենտրոնում կանգնեցված է Ղուկաս Ղուկասյանի արձանը։

Այդպիսի տենդենցներ կարելի է մատնացույց անել նաև Մանկական կլինիկայի ճարտարապետության լուծման մեջ, որը կապվում է Խ. Աբովյանի հրապարակի, ինչպես նաև Անատոմիկումի նախագծման հետ։ Շինարարության յուրաքանչյուր օբյեկտի համար շատ կարևոր համարելով քաղաքի ճարտարապետության մեջ համապատասխան տեղ և կերպար գտնելը, Թամանյանը ուշի ուշով հաշվի էր առնում այն բոլոր պայմանները, որոնք կարող էին նպաստել գեղարվեստական արտահայտչականության հասնելու գործին։ Այդ տեսակետից լավագույն լուծմամբ աչքի է ընկնում արդեն հիշատակված Հայկական ՍՍՌ Կառավարական տունը։ Շինարարության ձևով անհարմար հողամասը և անորոշ կոնֆիգուրացիայով ինքնամփոփ կառուցումը առաջին հայացքից չկետք է նպաստեին այնպիսի լուծում գտնելու գործին, որ շենքը բոլոր կողմերից ճարտարապետական ամբողջություն ունենար։ Բայց այդպիսի ամբողջականություն ձեռք է բերված և քաղաքաշինական տեսակետից արդարացված է։ Շենքը շատ հետաքրքիր ձևով հոկտեմբերյան պողոտայի հեռանկարը վերջափակում է ճակատոնով պսակված մեծ որմնախորշով։ Նալբանդյան փողոցի հեռանկարի երկարությամբ ֆոնի վրա բարձրանում է եզրակալման աշտարակը, որը գեղեցիկ սյունաշարով կապված է շենքի ընդհանուր կոմպոզիցիայի հետ։ Հետաքրքիր են շենքի այն կողքերը, որոնք օրդերի համամասնական հստակ ռիթմով նայում են Մելիք-Ադամյանի փողոցին։ Առանձնապես մեծ գեղարվեստական տպավորություն է գործում գլխավոր ճակատը, որն ուղղված է հրապարակի հարավային օվալաձև կողմին։ Հզոր սյունափնջերի վրա հենված հինգ մեծ ու խոր կամարային բացվածքները գարմանալի հաճելի հեռանկարային խորություն են տալիս շքամուտքի բացվածքներին, որոնք համատեղ մոնումենտալ հիմք են ստեղծում այդ ճակատի ամբողջ կոմպոզիցիայի համար։ Կամարաշարքի կողքերի թեային ելունները և կամարների տակի գեղեցիկ սյունաշարը էլ ավելի են ուժեղացնում հոյակապ կոթողի թողած տպավորությունը։

Գլխավոր կամարաշարի վրա կամարագեղերի, խոյակների և մասնատված ծոփորների (ֆրիզների) լավ գծագրված նուրբ, բայց մասշտաբային զարդաքանդակը լրացնում է շենքի ճարտարապետությունը, որն իր ներդաշնակ գեղեցկությամբ, գեղարվեստական բովանդակությամբ և երևսպատման վարդագույն քարի ելևէջով գրավում է Լենինի հրապարակում գտնվող մարդու ուշադրությունը։

Հայկական ՍՍՌ Կառավարական տունը սովետական ճարտարապետության նշանավոր գործերից մեկն է և արժանացել է ընդհանուր բարձր գնահատության։

Թամանյանը ստեղծագործական մեծ գործունեությանը զուգորդում էր նաև հասարակական աշխատանքը. նա ընտրվել է Անդրկենտգործկոմի, Հայաստանի Կենտգործկոմի, Երևանի Քաղսովետի անդամ, Հայկական ՍՍՌ Պետպլանի տեխնիկական բարձրագույն խորհրդի նախագահ էր, Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի, Պոլիտեխնիկական ինստիտուտին կից պետական քննական հանձնաժողովի նախագահ և այլն։ Նոր Հայաստանի շինարարությանը Թամանյանը մասնակցում էր ոչ միայն իբրև ճարտարապետ. նա զբաղվում էր նաև ինժեներական և տնտեսական շատ հարցերով։ Թվում էր, թե էլեկտրիֆիկացման, ոռոգման, շինանյութերի արդյունաբերության, ձեռնարկությունների շինարարության և այլ

Երևան քաղաքի վերակառուցման գլխավոր հատակագիծ

Երևանի գլխավոր հատակագիծ՝ ըստ գլխավոր ճարտարապետ Ալեքսանդրի

հարցերը հեռու են գեղագեղ-ճարտարապետի կոչումից։ Բայց նրան հասկանալի էին սովետական շինարարության նպատակներն ու խնդիրները. առանց էներգետիկ բազա ստեղծելու, առանց սոցիալիզմն ընդլայնելու չէր կարող Հայաստանի քաղաքների և մայրաքաղաքի աճում, հետևաբար նաև ճարտարապետության զարգացում լինել։ Դրա համար էլ Թամանյանն իրեն հատուկ եռանդով զեկավարում է Երևանի առաջին հիդրոկայանի, Սարդարաբադի և այլ ջրանցքների շինարարությունը, կազմակերպում է մարմարի գործարանը, նախագծում է մեխանիկական գործարանը և այլն։ Ինժեներական կառուցումների հետագա աշխատանքները կատարելու համար ինժեներներ հավաքագրելուց հետո միայն Թամանյանն ամբողջությամբ իրեն նվիրեց ճարտարապետությանը, կազմակերպելով ճարտարապետական արհեստանոց, որտեղ Հայաստանի փորձված մասնագետների հետ միասին ներգրավվեց նաև երիտասարդներին։ Մեր ռեսպուբլիկայի այսօրվա առավել փորձված և հայանի ճարտարապետները սովորել և աշխատել են Ալ. Թամանյանի զեկավարությամբ՝ նրանից սովորելով ճարտարապետության տարբերից մինչև բարդ խնդիրների լուծումը։ Դրանցից առանձնապես հիշատակության արժանի է Գեորգ Ալեքսանդրի Թամանյանը, որը կատարել է իր հոր հղացած, բայց չավարտած մի շարք շենքերի նախագծումը։ Նա սկզբունքայնություն և շնորհորություն է ցուցաբերել ակադեմիկոս Ալ. Թամանյանի՝ իրեն հանձնարարված նախագծերի իսկական մտահղացումները պահպանելու գործում։

Ալ. Թամանյանի արհեստանոցը նպաստել է Սովետական Հայաստանի ճարտարապետների դպրոցի ստեղծմանը, որը շարունակում է աճել սովետական շինարարության աճման հետ միասին։ Նա սովորեցրել է նախագծման կարգապահություն, դաստիարակել է անսահման սեր և հետաքրքրություն սովետական ճարտարապետության խնդիրների նկատմամբ։

Մեծ է ակադեմիկոս Թամանյանի թողած ստեղծագործական ժառանգությունը Սովետական Հայաստանի ճարտարապետությանը և խոշոր նշանակություն ունի նրա զարգացման համար։

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց ակադեմիկոս Թամանյանի բեղմնավոր գործունեությունը։ Կառավարությունը նրան շնորհեց Հայաստանի ժողովրդական ճարտարապետի կոչում։ Հայկական ՍՍՌ Կառավարական տան ճարտարապետության համար նրան շնորհվել է Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչում։

ВЫДАЮЩИЙСЯ СОВЕТСКИЙ ЗОДЧИЙ

М. В. ГРИГОРЯН

(Резюме)

В апреле 1958 года исполнилось 80 лет со дня рождения выдающегося советского зодчего Александра Ивановича Таманяна. Окончив Петербургскую Академию Художеств по классу архитектуры, А. С. Таманян с первых же лет своей практической работы выдвинулся в ряды передовых архитекторов России и обратил на себя внимание своими многочисленными проектами, осуществленными в Петербурге, Москве и в других городах России.

Особенно широкий размах получило творчество Таманяна в годы социалистического строительства. С первых лет установления в Армении Советской власти он работал в Ереване и связал свое имя с планировкой и строительством столицы Советской Армении. Одним из крупнейших памятников советской архитектуры является выстроенный по его проекту Дом правительства. Таманян проектировал также украшающие столицу республики здания Театра оперы и балета имени А. Спендиаряна и нескольких высших учебных заведений. Двенадцать лет жизни посвятил он созданию проекта перепланировки Еревана. В своей практической деятельности он использовал лучшие традиции армянской, русской и мировой классической архитектуры. «Во всех моих работах,—писал Таманян,—начиная с 1923 года, я пытался использовать культурное наследие прошлых веков. Я стремился найти решение, дающее сочетание национальной архитектурной формы с социалистическим содержанием».

Советское правительство высоко оценило плодотворную научную и общественную деятельность академика Таманяна и присвоило ему звание народного архитектора Армении и лауреата Сталинской премии.